

# “Նախադպրոցական կրթության մասին” օրենքում փոփոխություն կատարելու մասին” օրենքի նախագիծ

**Նախագիծ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ**

**ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Հոդված 1.** «Նախադպրոցական կրթության մասին» 2006 թվականի հունվարի 1-ի ՀՕ-236-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 23-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի գործողությունը դադարեցնել:

**Հոդված 2.** Օրենքը լրացնել նոր՝ հետևյալ բովանդակությամբ 7-րդ գլխով՝

«ԳԼՈՒԽ 7

*ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ*

**Հոդված 30.** *Անցումային դրույթներ*

1. Սույն օրենքի 19-րդ հոդվածի 2-ին և 3-րդ մասերով սահմանված դրույթները չեն տարածվում մինչև 2022 թվականի փետրվարի 20-ը ընտրված տնօրենների վրա՝ մինչև օրենքով սահմանված նրանց լիազորությունների ժամկետի ավարտը: Իսկ անորոշ ժամկետով պայմանագրի հիման վրա պաշտոնավարող տնօրենները մինչև 2023 թվականի օգոստոսի 1-ը վերապատրաստվում են, ստանում ուսումնական հաստատության կառավարման իրավունքի հավաստագիր և մասնակցում տնօրենի ընտրության համար մրցույթին:

**Հոդված 3.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: